

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ**

ՏՈՆԵՅԱՆ ՈՒ. Ս.

Աշխարհում առաջին ցեղասպանության ոգեկոչման 90-ամյակին նվիրված միջոցառումներն անտարբեր չեն թողել աշխարհի հումանիստներին, գրականության ու արվեստի բնագավառի առաջադեմ գործիչներին, ովքեր դատապարտում են մարդկության դեմ կատարված և իր նախադեպը չունեցող Մեծ եղեռնը՝ դրանով իսկ թեմային տալով համամարդկային ցավի հնչեղություն: Աշխարհն այսօր, իրոք, անհանգստացած է, որովհետև վտանգը միայն կատարված ոճրագործությունը չէ. կրկնակի հանցագործություն է սխալը չընդունելը, որը կրկնվելու դուռ է բացում: Ամենևին էլ պատահական չէ, որ գերմանացի գիտնական Հայնրիխ Ֆյուրբախերը գրում է. «Գալիք աղետների սաղմը գտնվում է անցյալի ոճիրներն ու սխալը չընդունելու մեջ: Մենք իրավունք չունենք տրվելու մոռացությանը»¹: Իսկ ճապոնացի գիտնական, Տոկիոյի համալսարանի պրոֆեսոր Հիրոեսի Մեզևան «Հայերի մոռացված ցեղասպանությունը» մեծ ճանաչում գտած աշխատության մեջ գրում է. «Հայոց ցեղասպանությունը չի կարելի մոռանալ և անտեսել»²: «Ով պատմություն ունի, նա չի կարող հետ չնայել: Ով անցյալ ունի՝ չի կարող հիշողություն չունենալ»³, - գրում է Պարույր Սևակը: Այդ տեսակետից թեմային համահունչ է Պիտեր Բալաքյանի «Այրվող Տիգրիսը» աշխատությունը, որն արդեն տեղ է գտել «Նյու Յորք թայմս»-ի բեստսելլերների ցուցակում⁴: Ի դեպ, դա հայոց ցեղասպանության մասին առաջին գիրքն է, որ նման պատվի է արժանացել: «Այրվող Տիգրիսը», պատմամշակութային արժանահավատ գործ լինելուց բացի, ունի նաև քաղաքական լայն հնչեղություն, որովհետև «Նյու Յորք թայմս»-ի լավագույն գրքերի ցուցակում լինելն արդեն իսկ նշանակում է, որ այս կոթողային գիրքն իր ճանապարհն է հարթելու դեպի յուրաքանչյուր կոնգրեսականի գրասենյակը, դեպի պետքարտուղարություն, միջազգային լրատվամիջոցներ, համալսարանների պատմության ամբիոններ և վերջապես գրադարաններ»⁵: Բավական աղմուկ հանած այս գրքի մասին կարծիքներ են հայտնել գրողներ, արվեստագետներ, պատմաբաններ, որոնք նշում են հեղինակի ցուցաբերած

¹ Գրական թերթ, 18. I. 2002:

² Նույն տեղում:

³ Հայաստան, 15. I. 2003:

⁴ Ազգ, 23. X. 2003:

⁵ Նույն տեղում:

անկողմնակալ սկզբունքայնությունն ու պատմական դեպքերի լուսաբանման ժամանակակից պահանջների բավարարումը: Ավելորդ չենք համարում մեջբերել տորոնտոյաբնակ գրող և պատմաբան Պոլ Միչինսոնի կարծիքը «Այրվող Տիգրիսը» գրքի առթիվ հրատարակած իր գրախոսականում, որտեղ մասնավորապես ասված է. «Բալաքյանի նորագույն գիրքը մղում է Ամերիկային բացելու ցեղասպանության վերաբերյալ գիտելիքների մոռացված մի հոր և վերակենդանացնելու մարդասիրության հանդեպ ցուցաբերած նրա հզորագույն իմպուլսը»⁶: Նշենք, որ հեղինակը, ի նշան երախտագիտության, հիշում է բոլոր նրանց անունները, ովքեր իրենց ձայնն են բարձրացրել Օսմանյան Թուրքիայի իրագործած Հայոց ցեղասպանությունը դատապարտող պահանջով, այդ թվում՝ Կլարա Բարտոնը, Ջուլյա Ուորդ Հուփին, Թեոդոր Ռուզվելտը, Վուդրոու Ուիլսոնը, Սթիվին Քրեյնը, Էզրա Փաունդը, Մարտին Ջիլբերտը, Ռոբերտ Լիֆտոնը և շատ ուրիշներ, ովքեր իրենց մասնակցությունն են բերել Հայոց դատի պաշտպանության գործին: Ֆրանսիական տաղանդավոր կինոռեժիսոր Անրի Վերնոյը՝ Աշոտ Մալաքյանը, Հայոց ցեղասպանության թեմային անդրադառնալիս նշում է, որ անհնար է այդ ահավոր ողբերգությունը մոռացության տալ: «Երբեմն ուզում են, - ցավով հիշում է նա, - որ մենք՝ հայերս, քաղաքական, ռազմավարական նկատառումներով լուրջության մատնենք մեր պատմությունը, «փոքր-ինչ հասկացող» դառնանք: Մինչդեռ մեծ ազգերը նույնիսկ իրենց անփառունակ անցյալը չեն անտեսում: Ժամանակակից Գերմանիան չի թաքցնում նացիստական շրջանը, Ֆրանսիան անդրադառնում է գերմանական բռնազավթման մռայլ տարիներին ու հակահրեական քայլերին: Ինչու՞ թուրքերը դեպքերը ժխտելու, հարաբերականացնելու, պատասխանատվության մի մասը մեզ վերագրելու փոխարեն նույնը չեն անում»⁷, - եզրակացնում է արվեստագետը:

Վերջերս (2004 թ.) Մոսկվայի Չեխովի անվան գեղարվեստական թատրոնում բեմադրվեց ամերիկյան դրամատուրգ, ազգությամբ հույն Ռիչարդ Կալինոսկու «Լուսնահիբեշ» դրաման (1990 թ.): Թատրոնի տնօրեն Օլեգ Տաբակովի որոշմամբ թատրոնի շքամուտքին փակցված գովազդը հուշում էր, որ ներկայացումը նվիրված է հայ ժողովրդի Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Մինչ մոսկովյան բեմ բարձրանալը դրաման բեմադրվել է Ամերիկայի ավելի քան 50 թատրոններում, շահել բազմաթիվ մրցանակներ, իսկ 2001 թ. համարվել Ֆրանսիայի և Արգենտինայի թատերական խաղաշրջանի լավագույն ներկայացումը⁸: Հեղինակի վկայությամբ դա իրական պատմություն է իր առաջին՝ ազգությամբ հայ, կնոջ ծնողների և այն մարդկանց մասին, որ ապրել են 1915 թ. սարսափները, մինչև հասել են Ամերիկա⁹: Դրամայի սյուժեն ընդգրկում է Օսմանյան Թուրքիայի կողմից 1915-1923 թթ. իրագործած Հայոց եղեռնից հրաշքով փրկված հերոսների՝ Արամի և Սեդայի ողբերգական կյանքի պատմությունը, որոնք Ամերիկայի հյուրընկալ հողի

⁶ Նույն տեղում:

⁷ Գրական թերթ, 18. I. 2002:

⁸ Հայաստանի Հանրապետություն, 26. XI. 2004:

⁹ *Голос Армении*, 16. XII. 2004.

վրա փորձում են նոր կյանք սկսել: «Լուսնահրեշը» մեծ հաջողություն ունեցավ, ջերմորեն ընդունվեց հանդիսատեսի կողմից: Բայց այդ ամենը դեռ հետո էր գալու: Իրականում այդ հաջողությանը նախորդել է երկարատև, տառապալից աշխատանք: Ստեղծագործական կոլեկտիվի պատասխանատվությունը մեծանում էր ոչ միայն այն հանգամանքով, որ թեման քաղաքականացված էր, այլև նրանով, որ «Լուսնահրեշ»-ի բեմադրությունից առաջ, ռեժիսորի՝ Ալ. Գրիգորյանի խոստովանությամբ, ՄԽՍՏ-ում բեմադրության պատրաստվող երեք այլ ներկայացումների աշխատանքները դադարեցվել էին թատրոնի տնօրեն Օլեգ Տաբակովի հրամանով՝ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում էր ճանաչված ռեժիսորներին:

Ձեռնարկելով «Լուսնահրեշ»-ի բեմադրությունը՝ ռեժիսոր Ալեքսանդր Գրիգորյանը մի քանի փորձերից հետո ստիպված էր վերանայել նախնական դերաբաշխումը և փոխել հերոսներին մարմնավորող դերակատարներին: «Ամեն ինչ ընթանում էր բարեհաջող, հիշում է ռեժիսորը, բայց երբ հերթը հասավ որդեգրած տղայի դերակատարի ընտրությանը, ես ստիպված եղա փորձել 30 պատանիների... Եվ ահա ընտրությունն ընկավ 27-երորդին: Եկավ Անտոն Միխայլովը, որին մայրն ստիպողաբար էր բերել թատրոն, որը ոչնչի չէր հավատում»¹⁰: Պարզվում է՝ լրացել էր պատանու 15 տարին, իսկ նա պետք է խաղար 10-12 տարեկան տղայի դեր. «Բայց վերջնական որոշումը ես կայացրի այն բանից հետո, շարունակում է ռեժիսորը, երբ կարդալով դրամայից մի հատված, նա՝ (Անտոն Միխայլովը - Տ. Ու.) ասաց. «Իսկ ինչ է, բոլոր հայերը ո՞րք են»: Այդ խոսքերը նա արտաբերեց հոգեկան այնպիսի ապրումով, որ ես համոզվեցի, որ ընտրությունը ճիշտ է կատարվել»¹¹: Ինչպես նշեցինք, ներկայացումը ոչ մեկին անտարբեր չթողեց: Այն ընդգրկվեց նաև Հայոց ցեղասպանության ոգեկոչման 90-ամյակին նվիրված միջոցառումների ծրագրում: Հարկ է նշել, որ բեմադրության հաջողությունը մեծ չափով պայմանավորված էր նաև տաղանդավոր կոմպոզիտոր Մարտին Վարդապարյանի խորապես ազգային երաժշտությամբ: «Լուսնահրեշի»-ի մասին եղած կարծիքները միանշանակ են և լավատեսական: «Ռուս մարդիկ արձագանքում են օտարի ցավին, նշել է Օլեգ Տաբակովը, որը ներկայացումը դիտելու համար Բեռլինից ժամանել էր Մոսկվա, բայց ինչ օտարություն նույն հավատքն ունեցողների միջև: Ինձ համար 1,5 միլիոն զոհերով Հայոց ցեղասպանությունը պակաս նշանակություն չունի, քան հոլոքոստը... Մեկուկես տարի առաջ մենք այս ներկայացման շուրջ պայմանավորվեցինք Ա. Գրիգորյանի հետ, և ահա այն դարձավ իրողություն: Մենք բարի գործ ենք կատարել: Աշխարհը դաժանացած է, և բարության մեր կոչը կգնահատվի, մարդիկ կարձագանքեն ցավին...»¹²: Ահա և թատերագետ Մարգարիտա Յախոնտովայի կարծիքը. «Լուսնահրեշը» խիստ արդիական պիես է և ոչ միայն հայերի համար: Ինչպես նշեց Օլեգ Տաբակովը, այն արթնացնում է մտքեր և զգացմունքներ, որ քաղաքակիրթ

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

մարդուն են արժանի: ...Պիեռի հերոսները հրաշքով են փրկվել դժոխքից, և նրանց տանջող մտքերը այն մասին, թե ինչ են թողել հետևում, հայրենիքի մասին քաղցր վերհուշը չէ, այլ չթուլացող ցավը, չբթացող հիշողությունը՝ գազանության, աներևակայելի դաժանության և սպանությունների մասին, որ կատարվել են հարազատների հետ իրենց իսկ աչքի առաջ»¹³: Ներկայացման բարձրակետն այն դրվագն է, երբ Թովմասյան ամուսինները երկար տարիների համատեղ կյանքի ընթացքում առաջին անգամ պատմում են իրենց վերապրածը՝ նվաստացումներ, նահատակություն..., սակայն կրելով իրենց խաչը, նրանք իրենց մեջ ուժ են գտնում շարունակել ապրել, աշխատել, սիրել միմյանց:

Հայոց ցեղասպանության թեման իր արտացոլումն է գտել նաև կանադահայ կինոբեմադրիչ Ատոմ Եղոյանի «Արարատ» կինոնկարում: Այս թեման, ի դեպ, առաջին անգամ է շոշափվում ազգային կինեմատոգրաֆիայում: Ռեժիսորը խոստովանում է, որ ցեղասպանության մասին կինոնկար ստեղծելու գաղափարը երկար տարիներ իրեն հանգիստ չի տվել, բայց ամեն անգամ այդ հարցին անդրադառնալիս մտածել է, որ դա իր ուժերից վեր է: Սակայն պատահական դիպվածք, ինչպես հաճախ է լինում արվեստագետների կյանքում, Ատոմ Եղոյանին հավատ է ներշնչում իր կարողությունների հանդեպ, և նա դիմում է վճռական քայլի: «Երեք տարի առաջ,- վերհիշում է արվեստագետը,- Տորոնտոյի հայկական համայնքի կենտրոնում մի համեստ ընդունելություն էր կազմակերպվել իմ պատվին: Ներկա էր նաև կինոռեժիսոր Ռոբերտ Լանտոսը: Լանտոսն իր ելույթում ասաց, որ շատ ֆիլմեր էր տեսել իր ժողովրդի տառապանքների մասին, բայց առայժմ ոչինչ՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Հետո նա ավելացրեց, որ ինձ կաջակցի, եթե ցանկանամ նման ֆիլմ ստեղծել: Դա զարմանալի հրավեր էր և իսկական առիթ... Լանտոսը թողարկել է «Արևալույսի համը»՝ մի պատմական կինոկտավ Հունգարիայի հրեաների մասին: Այս կարգի ֆիլմերը հենց այն են, ինչի կարիքը մենք՝ հայերս, ունենք: Զգացի, որ պահը վրա է հասել»¹⁴: Կաննի կինոփառատոնում «Արարատի» ցուցադրումից հետո դահլիճը երկար ծափահարել է հոտնկայս: «Իմ ֆիլմերից ոչ մեկը,- ասել է ռեժիսորը,- նման ընդունելության չի արժանացել»¹⁵: Եվ դա պատահական չէր, որովհետև իբրև վիճահարույց թեմա՝ «Արարատ»-ի սցենարը նախապես հանձնվել է հայ մասնագետների դատին, որոնք մանրակրկիտ մշակման են ենթարկել այն և չեն սխալվել. այդ է վկայում կինոնկարի աննախադեպ հաջողությունը: «Արարատ»-ի սյուժեն որքան քաղաքականացված է, նույնքան էլ հուզական մոտիվներով է հագեցած: Իսկ այդպիսի պահերը քիչ չեն կինոնկարում: Այսպես, օրինակ, երբ կինոնկարի հերոսներից մեկը ասում է, թե «Ոչինչ չի վկայում, որ Թուրքիայում ինչ-որ բան է կատարվել», կինոխցիկը հեռանում է նրա դեմքից և մի քայլով կնոջ վրայից սահելով՝ ցուցադրում է գաղթականների թափորը, որի մեջ էր նաև Արշիլ Գորկին մոր հետ և ապա՝ տարիներ անց նկարած նրա հայտնի կտավը: Ֆիլմի որոշ

¹³ Հայաստանի Հանրապետություն, 20. XI. 2004:

¹⁴ Ազգ. 7. VII. 2004:

¹⁵ Նույն տեղում:

հատվածներ «Արարատ»-ի մասին ստեղծել են իրարամերժ և հակասական կարծիքներ: Մի մասը կինոնկարի հեղինակին մեղադրում է «չափն անցնելու» մեջ, իսկ յուրայինները ռեժիսորից պահանջում են պատմական լայն կտավի գործ, ասենք՝ Սթիվեն Սփիլբերգի ոգով, ինչպես «Շինդլերի ցուցակը», որը հիանալի գործ է ողջակիզման մասին՝ մոռանալով մի շատ կարևոր հանգամանք: «Մյուս ժողովուրդների պատմության մեջ հերքվող աղետ չկա,- իրավացիորեն նշում է Ա. Եղոյանը,- իսկ սա Հայոց ցեղասպանությանն ընդհանուր բնույթ է տալիս՝ փաստորեն դարձնելով մարդկության դեմ գործված ոճիր, որը հետևողականորեն ժխտվում է»¹⁶: Մնում է ամփոփել, թե ինչու ցեղասպանությունից հետո անցած 90 տարիների ընթացքում այդ անմեղ զոհերի հիշատակին նվիրված մեծ կտավի գործ չի ստեղծվել նախքան «Արարատ»-ը: Բարեբախտաբար, Ատոմ Եղոյանի «Արարատ» կինոնկարը մասամբ լրացնում է հայ մշակույթի այդ բացը: Այդ են վկայում մամուլում հրապարակված կարծիքները: Երբ կինոնկարը ցուցադրվեց Ճապոնիայում, Նաումի Թաջիցուն կինոնկարին նվիրված գրախոսականում գրեց, որ «Արարատ»-ը հետազոտում է հայ ժողովրդի հիշողությունն ու իրականությունը. «Այնտեղ ժամանակակից Տորոնտոյում ֆիլմ են պատրաստում հայազգի նկարիչ Արշիլ Գորկու մասին, որն իրական կյանքում 1915 թ. Հայոց ցեղասպանության օրերին փախել է Նյու Յորք: Այստեղից ճյուղավորվում է ֆիլմում ներգրավված կերպարների անձնական կյանքը՝ ցույց տալով, թե ինչպես 90 տարի անց նրանք շարունակում են ցնցված մնալ այդ մղձավանջից: Բայց «Արարատը», անդրադառնալով հանդերձ այդ իրադարձությանը, խուսափում է լոկ դրա կինեմատոգրաֆական պատմությունը ներկայացնելուց՝ փոխարենն առաջարկելով խորհել դրա ժառանգության, մարդկանց վրա թողած հետքի մասին: ...Ծնունդով հայ Եղոյանն ասում է, թե տարիներ շարունակ նրան տանջել է այն գաղափարը, որ ֆիլմ նկարահանի Հայոց ցեղասպանության մասին, որի ընթացքում մոտ մեկ միլիոն հայեր կոտորվեցին թուրքերի կողմից Առաջին աշխարհամարտի օրերին: Բայց նրա նպատակն ինչպես քաղաքական, այնպես էլ արվեստագիտական նկատառումներով չի եղել սոսկ պատմական իրադարձությունը: Հայոց ցեղասպանության առանձնահատկությունն այն է, որ հանցագործը ժխտում է իր կատարածը, և 90 տարի անց զոհերի թոռներն ու ծոռները դեռևս փորձում են «հաշտվել» պատմության հետ, փորձում են բանակցել ներկայումս, խոսել թուրք անհատի հետ, որը մեծացել է՝ հավատալով, որ ոչինչ չի պատահել: Պատմությունը վերապատմելու ռեժիսորի ընտրած ձևն «Արարատը» դրել է տարօրինակ իրավիճակի մեջ,- ասված է գրախոսականում,- թուրքական կողմը քարոզչություն է համարում այն, հայկական կողմը՝ թերի: Սա հետաքրքրական է, որովհետև ցեղասպանության փաստացի իրադարձությունները ծավալվում են ֆիլմից դուրս...»¹⁷: Թուրքական իշխանություններն անասելի աղմուկ բարձրացրին կինոնկարի ցուցադրումն արգելելու համար, սակայն դա նրանց չհաջողվեց: Ավելին, Ատոմ Եղոյանի «Արարատ»-ին հետևեց ամերիկահայ Մայքլ (Միքայել) Հակոբյանի

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, 21. IV. 2004:

«Գերմանիան և գաղտնի ցեղասպանությունը» կինոնկարի ցուցադրումը Չեխիայում «Եղեն սվետ» (Մեկ աշխարհ) միջազգային վավերագրական կինոփառատոնի շրջանակում, որը հայտնություն էր հանդիսատեսի համար: Նշենք, որ ռեժիսորի նախորդ յոթ կինոնկարները նույնպես նվիրված են ցեղասպանությանը¹⁸, բայց վերջինի նպատակն էր ցույց տալ կայգերական Գերմանիայի դերակատարությունն Օսմանյան Թուրքիայի կողմից 1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության իրականացման գործում: Կինոնկարում օգտագործված են փաստաթղթեր, որոնց հավաքման համար պահանջվել է 25 տարի¹⁹, կինոնկարի հեղինակը երեք անգամ եղել է գերմանական արխիվներում: Պարզվում է՝ հայերը խանգարել են նաև Գերմանիայի կողմից իրականացվող Բեռլին-Բադադ երկաթուղու շինարարությանը, որն անցնելու էր հայաբնակ վայրերով: Ամենևին էլ զարմանալի չէ, որ կինոնկարն արգելվել է ցուցադրել բեռլինյան և մյունխենյան կինոփառատոններում, իսկ Թուրքիան պարզապես արգելում է Հակոբ-յանի մուտքը Թուրքիա: Ռեժիսորի վկայությամբ, Գերմանիային նվիրված ժապավենը երկրորդն է «Չայներ լճից» կինոնկարից հետո, որը, ըստ էության, մի ընդհանուր եռապատումի մասն է կազմում: Երրորդը բեմադրվում է և էկրան կրաճարանա «Քարավաններ Եփրատից»²⁰ վերտառությամբ, որը պատմելու է Դեր-գորի ահավոր ոճրագործության մասին:

Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին է նվիրված երաժշտագետ, կոմպոզիտոր Վահրամ Բարայանի «Մուսա լեռան 40 օրը» օպերան: Ավստրիացի մեծ հումանիստ Ֆրանց Վերֆելը ժամանակին Հայոց ցեղասպանության թեմային տվել է համամարդկային ցավի հնչեղություն: Եվ ահա հայ կոմպոզիտորը, «Մուսա լեռան 40 օրը» գրքի բովանդակությունը դարձնելով երաժշտական ստեղծագործության պոմժե, առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերել. հրաժարվելով ազգային մշակույթում իշխող լավկանությունից՝ հերոսական շունչ է հաղորդել «Մուսա լեռան 40 օրը» օպերային՝ նշելով. «ցեղասպանությունը պետք է դառնա խնդիր և ոչ թե հեծեծանք»²¹: Կոմպոզիտորը համոզված է, որ իր ստեղծագործության մեջ լսելի է դարձրել մարդկային ոգու հաղթանակը, ուժը և հաղթելու կամքը, ոճի ի կողքին դրել է փրկվածների գալիքը, ապրելու հրճվանքը, կորսվածը հետ նվաճելու և պաշտպանելու հզոր տենչը²²: Վահրամ Բարայանը երաժշտական ստեղծագործության հայտնությունը համեմատում է օլիմպիական ջախը վառող մարզիկի գործողության հետ. «Մեկ անգամ պետք է արձակես նետը և վառես կրակը՝ այդ մեկ անգամի մեջ դնելով ողջ ուժդ: Այդպես էլ երաժշտություն ստեղծելիս է»²³, - եզրակացնում է արվեստագետը:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Առավոտ, 19. II. 2005:

²⁰ Նույն տեղում, 17. III. 2005:

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

Ամփոփելով այն ծավալուն փաստացի նյութը, որին առնչվեցինք մեր հետազոտության ընթացքում, համոզվեցինք, որ ճակատագրի բերումով աշխարհի ուզածդ երկրում հայտնված հայր նույնքան պահանջատեր է Հայոց ցեղասպանության հարցում, որքան ամեն տարի ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդ այցելող հայաստանցին: Պարզ դարձավ նաև, որ ժամանակակից Թուրքիան ոչ միայն չի ընդունում 1915-1923 թթ. օսմանյան Թուրքիայի իրագործած Հայոց ցեղասպանության փաստը, այլև ամեն միջոց գործադրում է, որպեսզի խանգարի այդ թեման շոշափող ամեն մի փորձ: Այսպես, օրինակ, դեռևս անցյալ դարասկզբին աշխարհահռչակ կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանը փորձեց Հոլիվուդում էկրանավորել Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը», բայց Թուրքիայի ճնշման տակ ամերիկյան «Մետրո գոլդուին Մեյեր» հայտնի կինոընկերությունը դադարեցրեց կինոնկարի հետագա աշխատանքները²⁴: Թուրքիան փորձեց նույն ճանապարհով խանգարել նաև Ատոմ Եղոյանի «Արարատ»-ի նկարահանումը, իսկ հետո նաև ցուցադրումը, բայց ժամանակները փոխվել էին, և դա նրան չհաջողվեց: Այսպես, Սուրբ ծննդյան տոնին Հոլիվուդում «Միրամաքս» խոշոր կինոընկերությունը էլեկտրոնային փոստով 2000-ից ավելի նամակ է ստացել «Արարատ» կինոնկարի ստեղծագործական խմբի հետ կնքած պայմանագիրը խզելու պահանջով²⁵: Դրան ի պատասխան՝ կինոընկերությունը դիմել է խորհրդատուի: Վերջինս մի ամբողջ թղթապանակ է ներկայացրել, որն առնչվում է Հայոց ցեղասպանությանը, դրա ճանաչմանը և Միացյալ Նահանգների վերաբերմունքին: Ավելին, խորհրդատուն հավելել է նաև, որ ԱՄՆ-ի նախկին նախագահ Ռոնալդ Ռեյգանը մի առիթով օգտագործել է «ցեղասպանություն» բառը²⁶: Իսկ «Միրամաքսի» ղեկավար Վայնշտայնը Կաննի կինոփառատոնում «Արարատ»-ի ցուցադրումից հետո դժգոհեց, որ իրեն հոգնեցրել է Վաշինգտոնում հիմնավորված թուրքական լոբբին, որը ժխտում է ցեղասպանությունը, ինչպես ոմանք՝ ողջակիզումը²⁷: Բայց առանձին դեպքերում Թուրքիային հաջողվում է արդյունքի հասնել՝ գոնե մասամբ, ինչպես դա եղավ Իտալիայի պարագայում, երբ Իտալիայի թուրքամետ իշխանությունները թուրքական լոբբիի և դեսպանի ճնշման տակ ծրագրից հանեցին նախապես համաձայնեցված «Արարատ»-ի ցուցադրումը, այն էլ այն պահին, երբ հանդիսարանում մարել էին լույսերը, և հանդիսականներն անհամբեր սպասում էին կինոնկարի ցուցադրմանը²⁸: Փոխանակ ականջալուր լինեն ճշմարտության ձայնին, Թուրքիայի իշխանությունները տենդո-րեն ուղիներ են որոնում Հայոց ցեղասպանության ճանաչման դեմն առնելու համար, բայց ապարդյուն: Որքան էլ ջանքեր գործադրի ժխտելու Հայոց ցեղասպանությունը, դա Թուրքիային չի հաջողվի, որովհետև հայ ժողովուրդն իր պահանջատիրությունը հաստատում է փաստերով, իսկ փաստերն անողորմ են:

²⁴ Ազգ, 7. VII. 2004:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

²⁷ *Голос Армении*, 2. IV. 2003.

²⁸ Նույն տեղում:

ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ КУЛЬТУРЕ

ТОНЕЯН У. С.

Резюме

Геноцид армян 1915-1923 гг., запланированный и осуществленный на государственном уровне младотурками, навсегда останется самой позорной страницей в истории Турции. Это преступление против человечества нашло свое отражение не только в национальной культуре армянского народа, но и в трудах известных представителей иных культур, таких, как Генрих Фирбюхер из Германии, Гироеси Сегева (книга “Позабытый геноцид армян”) из Японии, американский драматург Ричард Колиноски (пьеса “Лунное чудовище”). Современники знают и помнят произведения наших соотечественников: роман Питера Балакяна “Горящий Тигрис”, фильм А. Егояна “Арарат” и фильмы Майкла Акопяна “Германия и тайный геноцид” и “Голоса из озера”, опера “Сорок дней Муса-дага”, в которых четко прослеживается стремление нашего народа добиться восстановления исторической справедливости. Это своего рода предостережение всему миру во избежание повтора такого позорного явления, как геноцид нации.